Արձանագրություն N 2

Երևան քաղաքի հողային պաստառով /գրունտային/ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-19/142 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

19.07.2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սարգսյան /գնահատող/, Ա. Հովհաննիսյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/142 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի հուլիսի 19-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/142 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Բագարանի բարիք» ՓԲԸ
2	ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքի հողային պաստառով /գրունտային/ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ	300000	198000		198000
«Բագարանի բարիք» ՓԲԸ		200000		200000

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Կիրակոսյան)

4.1 «Բագարանի բարիք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

4.2 ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ-ի կողմից ներկայացված փսատաթղթերում առկա են անհամապատասխանությունների հրավերի պահանջներին, մասնավորապես, թիվ 1 հավելվածում նշված ընթացակարգի ծածկագիրը, գնային առաջարկում նշված գնման առարկան և ծածկագիրը չեն համապատասխանում հրավերի պահանջներին: Գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի պահանջով:

4.3 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ	Անբավարար
«Բագարանի բարիք» ՓԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/142» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Բագարանի բարիք» ՓԲԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

(Ա. Կիրակոսյան)

6.1 Հիմք ընդունելով «Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել պետական եկամուտների կոմիտե:

6.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ _____ Կ. Հարությունյան

_____ Ա. Սարգսյան

_____ Ա. Հովհաննիսյան

_____ Ա. Հարությունյան

Քարտուղար՝ _____ Ա. Համբարձումյան